

**Հարց** Ի՞նչ է «Շփոթությունը» և ե՞րբ է այն առաջանում:

**Պատասխան** Ձեռնարկատիրական գործունեության ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որն առաջացնում է կամ կարող է առաջացնել շփոթություն այլ տնտեսավարող սուբյեկտի, նրա գործունեության կամ առաջարկած ապրանքների նկատմամբ, համարվում է անբարեխիղճ մրցակցության գործողություն:

Շփոթություն կարող է առաջանալ.

1. Գրանցված կամ չգրանցված ապրանքային և սպասարկման նշանների,
2. Ֆիրմային անվանումների,
3. Ապրանքի արտաքին տեսքի, օրինակ՝ գրանցված կամ չգրանցված արդյունաբերական նմուշի, ապրանքի փաթեթավորման, գույնի կամ այլ ոչ ֆունկցիոնալ բնութագրերի,
4. Քաղաքացիական շրջանառության մասնակիցների, ապրանքների, անհատականացման այլ միջոցների, օրինակ՝ գործարարության խորհրդանիշի, բառեր փոխարինող նշանների կամ տառերի, կարգախոսների,
5. Ապրանքների ներկայացման ձևերի, այդ թվում՝ գովազդի, ծառայողական հագուստի, ապրանքների մատուցման ոճի,
6. Ապրանքների սպառողական պահանջարկը խթանելու նպատակով օգտագործվող հոչակավոր մարդկանց, ինչպես նաև գրականության կամ արվեստի հանրաճանաչ կերպարների անվան ժողովրդականության կամ համբավի նկատմամբ: